

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների Գնահատումը
Որպես Կրթության Որակի Բարելավման Միջոց

Հետազոտող ուսուցիչ՝ Սաղաթեյան Ջանիբեկ

անուն, ազգանուն

Աղաջեցյալի Հր. Քոչարի անվան Ֆիզ. շպրոչ

դպրոց

Մենթոր ուսուցիչ՝

Սաթենիկ Գամազյան

անուն, ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Կրթական գնահատում.....	3
1.1 Սովորողների գնահատումը Որպես կրթության Որակի Բարելավման Միջոց	4
1.2 Բանավոր Հարցում.....	7
1.3 Գործնական աշխատանք և կիրառություններ.....	8
2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ.....	11
3. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....	14
4. ԿԱՊԿՈՒ ՍՈՎՈՐՈՂԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՖԻԶԿՈՒՆՏՐՈՒՐԱ ԱՌԱՐԿԱՅԻՑ.....	15
5. ԵԶՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ.....	16
6. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը՝

Դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջան, երբ անհրաժեշտ է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջների իրականացմանը:

Դպրոցական տարիքում առաջատար է հանդիսանում ուսումնական գործունեությունը: Որպեսզի գիտակցենք իմացաբանական գործունեության կատեգորիան, պետք է իմանալ նրա հստակ կառուցվածքը: Այդ կառուցվածքի մեջ են մտնում այն նույն բաղադրիչները, որոնք մտնում են ցանկացած գործունեության մեջ:

Դրանք են՝ նպատակը, մոտիվները, գործունեությունը արդյունքը, գնահատականը:

Այս համակարգը որով գնահատվում է դպրոցականների յուրացման մակարդակը, որը համարվում է կարևոր բաղադրիչ:

Չետագոտության ուսումնասիրության նպատակն է ուսումնասիրել սովորողների գնահատումը որպես կրթության որակի բարելավման միջոց:

Խնդիրները՝

- Բացահայտել սովորողների գնահատման ընթացակարգը
- Վերլուծել գնահատականը որպես մոտիվացիա
- Բացահայտել գնահատումը որպես կրթության որակի բարելավման միջոց

Աշխատանքը բաղկացած է՝ ներածությունից, բուն կյուրթց, աշխատությունը ամփոփվում է եզրակացությունով, և օգտագործված գրականության ցանկով:

1. Կրթական գնահատում գիտելիքների վերաբերյալ Էմպիրիկ տվյալների փաստաթղթավորման և օգտագործման համակարգված գործընթացն է: Գնահատման տվյալները կարող են ստացվել ուսանողների աշխատանքի ուղղակի ուսումնասիրությունից՝ ուսումնառության արդյունքների ձեռքբերումը գնահատելու համար կամ կարող են հիմնվել այն տվյալների վրա, որոնցից կարելի է եզրակացություններ անել ուսման վերաբերյալ[3]: Գնահատումը հաճախ օգտագործվում է թեստի փոխարեն, բայց չի սահմանափակվում թեստերով[4]: Գնահատումը կարող է կենտրոնանալ անհատական սովորողի, սովորող համայնքի (դասարան, սեմինար կամ սովորողների այլ կազմակերպված խումբ), դասընթացի, ակադեմիական ծրագրի, հաստատության կամ որպես ամբողջություն կրթական համակարգի վրա:

Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:

«Գնահատում» բառը կրթական համատեքստում կիրառության մեջ մտել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Կրթական գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերհսկման և բարելավման մեխանիզմ:

Որակի չափանիշներ

Ընդհանուր առմամբ, բարձրորակ գնահատականներ են համարվում բարձր հուսալիությամբ և հիմնավորվածությամբ գնահատականները: Այնուամենայնիվ, հուսալիության և հիմնավորվածության մոտեցումները տարբեր են:

Հուսալիություն

Հուսալիությունը վերաբերում է գնահատման հետևողականությանը: Հուսալի գնահատականն այն է, որը հետևողականորեն նույն արդյունքներն է գրանցում ուսանողների նույն (կամ նման) խմբի հետ: Հուսալիության վրա ազդում են տարբեր գործոններ՝ ներառյալ երկիմաստ հարցերը, հարցաթերթիկներում պատասխանի չափազանց շատ տարբերակները, անորոշ տրված հրահանգները և վատ ներկայացված օբյեկտները:

Ավանդաբար, գնահատման հուսալիությունը հիմնվում է հետևյալի վրա.

1. Ժամանակավոր կայունություն՝ փորձարկման կատարողականը համեմատելի է երկու կամ ավելի առանձին դեպքերում:

2. Ձևի համարժեքություն՝ քննվողների կատարողականը համարժեք է նույն բովանդակության վրա հիմնված տարբեր փորձարկումներին:

3. Ներքին հետևողականություն՝ փորձարկման պատասխանները համընկնում են հարցերին:

1.1 Սովորողների գնահատումը Որպես կրթության Որակի Բարելավման Միջոց

Սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ ամրագրելու համար գործածության մեջ են ստուգման հետևյալ տեսակները՝

1. բանավոր հարցում,
2. գործնական աշխատանք,
3. թեմատիկ գրավոր աշխատանք,
4. կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

Տնային և կարճ ժամանակի համար նախատեսվող աշխատանքների միավորային գնահատումը պարտադիր չէ:

Ստուգման տեսակների բազմազանությունը նպատակ ունի տարբեր տեսանկյուններից չափել աշակերտի «գլխում եղածը», որպեսզի արդյունքում ունենանք առավել հավաստի գնահատական:

«Շատ ավելի հեշտ է չափել գլխարկը, քան գլխում եղածը»:
«Գլխում եղածը» չափելը ոչ թե ֆիզիկական, այլ փսիխոմետրիկ չափում է: Այդ չափման արդյունքի հավաստիությունը կախված է տարբեր տեսանկյուններով չափումների քանակից. որքան շատ լինեն չափումների տեսակները, այնքան հուսալի ու հավաստի կլինեն եզրակացությունները: Ուսումնական գործընթացում ստուգման տեսակների քանակը որոշվում է՝ ելնելով առարկայական դաշտում դրանց իրագործելիության հնարավորություններից:

Ժամանակի ընթացքում ստուգման պարտադիր տեսակները կարող են փոփոխվել՝ ավել անալ կամ պակասել:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր կիրառման ընդհանուր ծավալով պետք է ընդգրկի տվյալ առարկայի՝ գնահատման ենթակա կիսամյակային ամբողջ ուսումնական ծրագրային նյութը և դրան բնորոշ կրթության բովանդակային բաղադրիչները: Մեկ կիսամյակում ստուգման յուրաքանչյուր տեսակի կիրառման հաճախականությունը որոշելու նպատակով ծրագրային նյութը բաժանվում է մասերի, որոնք կոչվում են թեմաներ:

Միավորային գնահատման նպատակով կարելի է (ոչ պարտադիր) օգտագործել կարճատև ամկետ թեմատիկ աշխատանքներ, ինչպես նաև տնային առաջադրանքները՝ որպես բանավոր հարցումներ:

Միավորային գնահատման ենթակա պարտադիր աշխատանքից բացակայած սովորողի համար նշանակվում է այն հանձնելու նոր ժամկետ:

Տարբեր բաղադրիչներով միավորային գնահատումն օգնում է առավել ամբողջական պատկերացում կազմել սովորողի մասին: Դրանով բացահայտվում են վերջինիս՝ տարբեր կարողությունների և հմտությունների տիրապետման աստիճանները: Այդ համապատկերում սովորողին պարզ են դառնում նրա գործունեության հաջողված և թերի կողմերը: Դա հնարավորություն է ընձեռում սեփական թերությունները վերացնել, ինչպես նաև ճիշտ կողմնորոշվել ապագա մասնագիտություն ընտրելիս:

Միավորային գնահատումն աշակերտի ուսումնական ձեռքբերումների նիշային կամ թվային արտահայտություն է, որի միջոցով պատկերացում է կազմվում կրթական պահանջներին աշակերտի համապատասխանության աստիճանի մասին:

Ընթացիկ առաջադիմության արդյունքները բացահայտելու նպատակով գործածության երաշխավորվող չորս տեսակներից յուրաքանչյուրը հնարավորություն է տալիս ստուգելու սովորողի, խմբի, դասարանի և դպրոցի կողմից հանրակրթական պետական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի պահանջների կատարման ընթացքը, յուրաքանչյուր սովորողի ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների փաստացի վիճակը, նրա արժեքային համակարգը:

1.2 Բանավոր հարցում

Բանավոր հարցումը գնահատման մի տեսակ է, որի ժամանակ աշակերտը բանավոր խոսքով ներկայացնում է յուրացրած ուսումնական նյութը՝ դրսևորելով ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Բանավոր հարցման հիմնական առավելությունն այն է, որ դրանով ստուգվում են սովորողի ոչ միայն մտապահման ու վերարտադրման ընդունակությունները, այլ նաև նյութի գիտակցված ընկալման մակարդակը: Այն ավելի ամբողջական պատկերացում է տալիս աշակերտի մտավոր կարողությունների, գիտելիքների յուրացման, լեզվամտածողության, վերարտադրելու և ստեղծագործական կարողությունների մասին:

Բանավոր հարցման միջոցով պարզվում են սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով.

- բանավոր խոսք,
- վերարտադրություն,
- հաղորդակցություն,
- համագործակցություն,
- լեզվամտածողություն,
- գիտելիքի յուրացում,
- տրամաբանություն,
- ստեղծագործական մտածողություն,
- ուսումնական գործունեություն ցուցաբերելու (մոդելավորելու) կարողություններ:

Բանավոր հարցումը կարելի է իրականացնել

- առանձին սովորողների՝ տեղում կամ գրատախտակի մոտ հարցման միջոցով,
- աշակերտներին ուղղված բանավոր հարցերի միջոցով,
- տնային աշխատանքների ստուգմամբ,
- համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ:

Բանավոր հարցումը կարելի է գնահատել հետևյալ հիմնական չափանիշներով.

1. ակադեմիական գիտելիքի իմացություն,
2. կիրառելու կարողություն,

3. ներկայացնելու կարողություն,
4. ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու կարողություն,
5. միջառարկայական կապեր տեսնելու կարողություն:

1.3 Գործնական աշխատանք և կիրառություններ

Հանրակրթության դերը պայմանավորված է նաև նրա գործնական կիրառական նշանակությամբ: Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է՝ աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:

Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին (ենթադրվում է նաև չափիչ սարքերի կամ համակարգչի կիրառություն):

Գործնական կարող ենք համարել այն աշխատանքները, որոնց կատարման համար թուղթ ու գրիչից բացի օգտագործվում են նաև այլ միջոցներ:

Գործնական աշխատանքներ են ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները, ինչպես նաև ուսումնական գործընթացում նախատեսվող ֆիզիկական պատրաստվածությունն ու այլ ֆիզիկական աշխատանքներ:

Կարևոր է նկատի ունենալ, որ սովորողների սոցիալական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը դիտվում են որպես ուսումնական թեմաների ուսուցմանն ուղեկցող պահանջներ:

Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,
- նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության շարունակականության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը:

Սովորողներին ներկայացվող չափորոշիչային և ծրագրային պահանջների համաձայն, նախատեսվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքներ.

1. հարցումների, դիտարկումների միջոցով տվյալների հավաքում և օգտագործում աղյուսակների և գծապատկերների տեսքով,
2. մոդելների, ձևանմուշների և մանրակերտերի (մակետների) պատրաստում,
3. դասավանդման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի ստեղծում (պաստառներ, ցուցափեղկեր (ստենդներ), տեսաֆիլմեր, էլեկտրոնային ներկայացումներ և այլն),
4. լաբորատոր աշխատանքների կատարում,
5. երևակայական փորձեր:

Կատարած գործնական աշխատանքի համար սովորողները գնահատվում են միավորներով: Դրանք կարող են հանձնարարվել ինչպես տանը, այնպես էլ դպրոցում կատարելու համար:

Գործնական աշխատանքները հիմնականում անցկացվում են երկու ձևով: Առաջին՝ աշակերտը դասընկերների ներկայությամբ կատարում է որոշակի գործնական առաջադրանք, որն ուղեկցվում է բացատրություններով: Մյուս աշակերտները հետևում են բացատրությանը և, անհրաժեշտության դեպքում, կատարում համապատասխան շտկումներ կամ մեկնաբանություններ: Երկրորդ՝ սովորողների կարողությունների ու հմտությունների ստուգումը կատարվում է միաժամանակ՝ յուրաքանչյուր աշակերտին տալով անհատական կամ տարբերակված առաջադրանք: Այս դեպքում նախընտրելի է, որ աշխատանքները կատարվեն դրանց համար նախատեսված առանձին տետրում, որն ուսուցիչն ստուգում և գնահատում է դասի ընթացքում կամ դասերից հետո:

Տեղանքում իրականացվող գործնական աշխատանքներն անցկացվում են խմբային մեթոդների կանոններով:

Գործնական աշխատանքները գնահատելիս հաշվի են առնվում.

- տրված գործնական առաջադրանքին բնորոշ ընդհանրացումների, գաղափարների ու փաստերի ըմբռնման աստիճանը,
- նորովի կամ ստեղծագործական մոտեցումը,
- առաջադրանքի համար անհրաժեշտ հաշվարկներ կատարելու կարողությունը,
- գործողությունների արդյունքները վերլուծելու և հաղորդելու կարողությունը:

Թեմատիկ աշխատանք

Թեմատիկ գրավոր աշխատանքն միավորային գնահատման մի տեսակ է, որի իրականացման ընթացքում սովորողն իր ուսանած ուսումնական նյութը ներկայացնում է գրավոր: Այդ աշխատանքները տրվում են ծրագրային որոշակի թեմա ուսուցանելուց հետո: Թեմատիկ գրավոր աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողներին ներկայացվող չափորոշիչային պահանջներին համապատասխան առաջադրանքներ՝ դրանց յուրացման մակարդակը բացահայտելու նպատակով: Կախված ուսումնական առարկայից և թեմայից՝ թեմատիկ աշխատանքը կարող է լինել բանավոր կան գործնական:

Առաջադրանքները կարող են տրվել թեստերով, որոնցում ներառված են ծրագրում առկա տարաբնույթ առաջադրանքներ.

- պատասխանի ընդարձակ շարադրմամբ,
- ճիշտ պատասխանի ընտրությամբ,
- կարճ պատասխան պահանջող,
- ապացուցում պահանջող,
- գործնական, կիրառական նշանակություն ունեցող,
- կառուցվածքի փոփոխություն պահանջող,
- գծապատկերի կազմման պահանջով,
- համապատասխանեցման պահանջով,
- բաց թողածը լրացնելու պահանջով,
- ստեղծագործական մոտեցում պահանջող, կամ դրանց համադրմամբ:

Թեմատիկ գրավոր աշխատանքներում պետք է ներառվեն 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ, ինչպես նաև համեմատաբար դժվար առաջադրանքներ, որոնք պահանջում են նյութի խորքային յուրացում, բարդ և անձանոթ իրադրություններում կողմնորոշվելու կարողություն, գիտելիքներն ստեղծագործաբար կիրառելու հմտություն: Այդ գրավոր աշխատանքները գնահատվում են 10 միավորային համակարգով: Կարևոր են նաև կարճաժամկետ գրավոր աշխատանքները, որոնց տրման նպատակն է որոշել ուսումնասիրված թեմաներից սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ու դրա հիման վրա կատարել եզրահանգումներ և պլանավորել անհրաժեշտ քայլեր:

Կիսամյակային ամփոփիչ աշխատանք

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքի նպատակն է՝ պարզել կիսամյակի ընթացքում աշակերտի ձեռք բերած գիտելիքի և կրթության բովանդակության «կարողություններ և հմտություններ» բաղադրիչի մակարդակը, ինչպես նաև պարզել կիսամյակի վերջում աշակերտի մնացորդային գիտելիքը:

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքը կարող է իրագործվել բանավոր հարցման, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով: Հարցման ձևը որոշում են առարկայական մասնագետներն ու

տնօրինությունը: Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքին տրվող ժամանակը որոշվում է՝ կախված ուսումնական առարկայից: Աշխատանքին տրվող ժամանակը պետք է համապատասխանի թեստի առաջադրանքները կատարելու աշակերտի հնարավորություններին:

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքը պետք է պարունակի չափորոշչով նախատեսված բոլոր բարդության առաջադրանքներ և ընդգրկի ամբողջ կիսամյակի ընթացքում անցած նյութը: Ընդ որում, թեստը պետք է պարունակի ստուգվող նյութի առաջին և երկրորդ աստիճանի բարդության առաջադրանքներ, իսկ երրորդ և չորրորդ աստիճանի բարդության առաջադրանքների ընտրությունը, կախված թեստի ծավալից և թեմաներից, թողնվում է թեստը կազմողին:

Թեստը պետք է ապահովի աշակերտի առավելագույն, և չափորոշիչ ային նվազագույն գիտելիքներ ունեցող աշակերտի՝ անցումային, միավոր ստանալու հնարավորությունը:

Թեստի յուրաքանչյուր առաջադրանքի կատարման համար տրվում է առանձին միավոր, նշվում է գնահատման քայլը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է մյուսներից անկախ: Թեստի առաջադրանքների կատարման համար տրվող գումարային առավելագույն միավորը կարող է տարբեր լինել 10ից: Այդ դեպքում, գումարային միավորը պետք է բերել 10 միավորային համակարգի:

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքից աշակերտի ստացած վերջնական միավորը մոտարկվում է (կլորացվում) է ամբողջ թվով, եթե այն ամբողջ չէ:

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքը կպարտավորեցնի աշակերտին լինել ուշադիր, ու սուցանվող նյութը սովորել հիմնովին և մտապահել: Դա կնպաստի աշակերտի մոտ մնացորդային գիտելիքի ավելացմանը: Դրանով «Կիսամյակային ամփոփիչ աշխատանք»-ի միավորային գնահատումը դառնում է կրթության որակի բարելավման մի կարևոր գործոն:

2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺՎԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

գնահատումը իրականացվում է 10-միավորային սանդղակով: Դրական գնահատական են համարվում 4-10 միավորները: Բացի 10-միավորային համակարգից՝ ուսումնական գործընթացում կիրառվում են նաև գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարթային: Հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական քննությունների ժամանակ կարող են կիրառվել գնահատման այլ համակարգեր: Առաջին դասարանում ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի աճի բնութագիր: Միավորներով և ստուգարթային գնահատումը կիրառվում է սկսած երրորդ դասարանից: Տարրական դպրոցն ավարտողը ուսումնական տարվա վերջին լրացնում է հատուկ մշակված հարցարան, որը հնարավորություն է ընձեռնում պարզելու ուսումնական գործընթացի արդյունքները նրա ձեռք բերած գիտելիքները, կարողությունները և հմտությունները, ինչպես նաև մտագործունեության մակարդակը: Այս ստուգումների արդյունքներն ունեն միայն տեղեկատվական բնույթ: Ձևավորված արժեքային համակարգը և վերաբերմունքը միավորային համակարգով չի գնահատվում:

Հիմնավորված գնահատականն այն է, որը չափում է այն, ինչ նախատեսվում է չափել: Օրինակ, միայն գրավոր քննության միջոցով վարորդական հմտությունները գնահատելը հիմնավոր չէ: Վարորդական հմտությունների գնահատման ավելի հիմնավորված տարբերակ կլինի թեստերի համադրությունը, որը կօգնի որոշել, թե վարորդը ինչ գիտի՝ վարորդական գիտելիքների գրավոր ստուգման միջոցով, և ինչ կարող է անել՝ գործնական վարման գնահատականի միջոցով: Ուսուցիչները հաճախ դժգոհում են, որ որոշ քննություններ պատշաճ կերպով չեն գնահատում այն ծրագիրը, որի վրա հիմնված է քննությունը. նրանք, փաստորեն, կասկածի տակ են դնում քննության հիմնավորվածությունը:

Գնահատման հիմնավորվածությունը, ընդհանուր առմամբ, չափվում է հետևյալ կատեգորիաներում քննությունների ուսումնասիրության միջոցով.

- Բովանդակություն: Արդյո՞ք թեստի բովանդակությունը չափում է նպատակները:
- Չափանիշ: Արդյո՞ք միավորները փոխկապակցված են ապագա ձեռքբերումների հետ, (օրինակ՝ 4 -րդ դասարանի ընթերցանության թեստի բարձր միավորները ճշգրիտ կանխատեսում են ապագա դասարաններում ընթերցանության հմտությունները)
- Կառուցվածք: Գնահատումը համապատասխանում է այլ էական հանգամանքների հետ, (օրինակ՝ արդյո՞ք անգլերենը որպես երկրորդ լեզու սովորող ուսանողները տարբեր կերպ են ներկայանում գրավոր քննության ժամանակ, քան անգլերեն բանախոսները[8]:

Լավ գնահատականն ունի և՛ հիմնավորվածություն, և՛ հուսալիություն, գումարած որակի այլ հատկանիշներ, որոնք վերը նշված են որոշակի համատեքստում և նպատակով:

գործնականում, գնահատումը հազվադեպ է ամբողջովին հիմնավորված կամ փոփին հուսալի: Քանոնը, որը սխալ է չափում, միշտ էլ նույն (սխալ) չափումները ցույց կտա: Այն շատ հուսալի է, բայց ոչ այնքան հիմնավոր: Պատահական անցորդներին ժամը հարցնելը՝ առանց ժամացույցին նայելու, երբեմն օգտագործվում է որպես հուսալի, բայց ոչ այնքան վստահելի գնահատման օրինակ: Անհատների տված պատասխանները տարբեր կլինեն, բայց պատասխանների միջինը, հավանաբար, մոտ կլինի իրական ժամանակին: Շատ ոլորտներում, ինչպիսիք են բժշկական հետազոտությունները, կրթական թեստերը և հոգեբանությունը, հաճախ հուսալիության և հիմնավորվածություն միջև փոխզիջումներ են լինում: Պատմության թեստը, որը կազմվում է բարձր հիմնավորվածությամբ, կունենա բազմաթիվ շարադրական և լրացնող դատարկ հարցեր: Դա կլինի առարկայի յուրացման լավ չափանիշ, բայց դժվար է ամբողջովին ճշգրիտ միավորներ հավաքել: Պատմության թեստը, որը կազմված է բարձր հուսալիությամբ, կարող է ունենալ ամբողջովին տարբեր պատասխաններ: Սա չի կարող լավ չափել պատմությունն առարկայի իմացությունը, բայց հեշտությամբ և ճշգրտությամբ կարող է գնահատել: Նշվածից կարող ենք ընդհանրացնել՝ որքան ավելի հուսալի է չափվող առարկայի գնահատականը, այնքան ավելի քիչ վստահելի է, որ մենք իրականում չափում ենք այդ առարկան: Ավելի լավ է տարբերակել «բովանդակային» հիմնավորումը «կանխատեսող» հիմնավորումից: Նախորդը լայնորեն կիրառվում է կրթության մեջ և կանխատեսում է, որ ուսանողը տարբեր հարցերով, բայց նման թեստերից կստանա նույն գնահատականը: Երկրորդը լայնորեն կիրառվում է աշխատավայրում, կատարում է կանխատեսում: Այսպիսով, վարման կանոնների իմացությունը ստուգելու համար տեղին է «բովանդակային» հիմնավոր թեստը, մինչդեռ «կանխատեսող» թեստը կգնահատի, թե պոտենցիալ վարորդը կարո՞ղ է հետևել այդ կանոններին:

Գնահատման չափանիշներ Գնահատման և մասնավորապես, կրթական գնահատման ոլորտի վերաբերյալ Կրթության գնահատման չափանիշների համատեղ հանձնաժողովը հրապարակել է գնահատումների չափանիշների երեք փաթեթ: Անձնակազմի գնահատման չափորոշիչները հրապարակվել են 1988 թվականին: Ծրագրերի գնահատման չափորոշիչները (2-րդ հրատարակություն)՝ 1994 թվականին, իսկ Սովորողների գնահատման չափանիշները՝ 2003 թվականին: Յուրաքանչյուր հրապարակում ներկայացնում և մշակում է մի շարք չափորոշիչներ՝ տարբեր կրթական պայմաններում օգտագործելու համար: Չափորոշիչները տրամադրում են ուղեցույցներ՝ գնահատման համակարգերը նախագծելու, կատարման, գնահատման և բարելավման համար: Չափորոշիչներից յուրաքանչյուրը դասվել է չորս հիմնական կատեգորիաներից մեկին՝ նպատակաուղղված, օգտակար, իրագործելի և ճշգրիտ կրթական գնահատումները խթանելու համար: Այս չափորոշիչների հավաքածուներում հուսալիության և հիմնավորվածության նկատառումներն ընդգրկված են ճշգրտության սահմաններում (TAQA) օգնում է անձնակազմին, սովորել և զարգացնել մեծ փորձ՝ մեծահասակների, հետագա և աշխատանքի վրա հիմնված կրթության և վերապատրաստման ենթատեքստերում կրթական գնահատման հետ կապված:

Ամփոփիչ և ձևավորող գնահատում

Ամփոփիչ գնահատում	Ձևավորող գնահատում
Ատեստավորում. Երբ սովորողի արդյունքները գրանցվում են վկայագրում, դիպլոմում կամ փոխադրման թերթիկում	Հայտորոշում. Երբ գնահատման արդյունքներն օգտագործվում են սովորողի թույլ կողմերը որոշելու նպատակով, որպեսզի դրանք վավերացվեն և սովորելու հետագա ընթացքը բարելավվի
Ընտրություն. Երբ արդյունքներն օգտագործվում են դիմողների սահմանափակ քանակ ընտրելու և ընդունելու նպատակով	Արժևորում. Երբ գնահատման արդյունքներն օգտագործվում են ուսումնական ծրագրի արդյունավետության գնահատման նպատակով, որպեսզի այն կատարելագործվի հետագայում

Գնահատմամբ պարզվում է սովորողների և դպրոցների կողմից առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարումը: Գնահատման հիմնական նպատակն է.

- սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների տիրապետման ստուգումը,
- արժեքային որակների ձևավորման ապահովումը և դրանց հիման վրա՝ ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսման որակի բացահայտումն ու վերահսկումը,
- գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնագարգացմանը:

Հանրակրթական դպրոցներում գոյություն ունեն գնահատման երկու հիմնական տեսակներ՝ ամփոփիչ և ձևավորող գնահատում: Ամփոփիչ գնահատման նպատակն է աշակերտի առաջադիմության գնահատումը ժամանակի որոշակի հատվածում և գրանցելու ու հրապարակելու առաջադիմության առկա մակարդակը: Ձևավորող գնահատման նպատակն է ստուգել աշակերտի՝ գիտելիքի յուրացման մակարդակը ժամանակի որոշակի հատվածում:

3. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

առաջադիմության գնահատման հիմնական նպատակն է սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման աստիճանի ստուգումը և ուսման որակի առարկայի չափորոշիչի և ծրագրային պահանջների կատարման ամբողջական պատկերը: Ֆիզիկական կուլտուրայից սովորողների առաջադիմության գնահատումը ֆիզիկական կուլտուրայից սովորողների շարժողական հնարավորությունների զարգացման դինամիկան գնահատելու և վերահսկելու նպատակով, ուսուցման բոլոր կուրսերում, ուսումնական տարվա սկզբում և վերջում անցկացվում է սովորողների ֆիզիկական պատրաստականության մակարդակի ստուգում հետևյալ վարժաձևերից՝ արագության վազքեր, ցատկեր, նետումներ, ձգումներ և այլն: Այն հնարավորություն է տալիս ճիշտ և արդյունավետ գնահատելու սովորողների հիմնական ֆիզիկական ընդունակությունների զարգացման աստիճանը: Գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները, սեռը, անհատականությունը, ինչպես նաև, թե որ բժշկական խմբում է նա ընդգրկված: Գնահատականը պետք է խրախուսի սովորողին, արձանագրի նրա աճը, ուժեղ և թույլ կողմերը, հաջողությունները և վրիպումները: Այն պետք է նպաստի սովորողների մեջ առաջացնելու ձգտում՝ բարելավելու և կատարելագործելու իրենց շարժողական հնարավորությունները: Գնահատումը իրականացվում է ընթացիկ և ամփոփիչ գնահատականներով: Ֆիզիկական կուլտուրայից պետք է գնահատվեն սովորողների գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Գիտելիքների գնահատումը իրականացվում է բանավոր հարցման միջոցով, իսկ կարողությունները և հմտությունները գնահատվում են գործնական աշխատանքով: Հիմնական կրթության հիմքով ընդունված սովորողների գնահատման համար առաջարկում ենք մեկ կիսամյակում յուրաքանչյուր սովորողին 2 բանավոր հարցում կատարել: Գործնական աշխատանքները մեկ կիսամյակում գնահատվում են 6-8 անգամ: Գործնական աշխատանքի ժամանակ գնահատվում է ուսումնական ծրագրով նախատեսված մարմնամարզական, աթլետիկական վարժությունների, տարբեր մարզախաղերի /վոլեյբոլ, բասկետբոլ, ֆուտբոլ, հանդբոլ/ և ընտրովի ուսումնական բաժինների գործնական կատարումները: Ֆիզիկական կուլտուրայի գործնական դասերին գնահատումը կատարվում է սովորողի ցույց տված արդյունքով (բանի վայրկյանում է վազել, որքան է ցատկել, քանի մետր է նետել և այլն), ինչպես նաև վարժությունների կատարման ճշտությամբ, հստակությամբ (մարմնամարզական վարժություններ, մարզախաղերի տարրեր և այլն): Կիսամյակային գնահատականի ձևավորման կարգը Հիմնական կրթության հիմքով ընդունված սովորողների ֆիզկուլտուրա առարկայից կիսամյակային գնահատականը ձևավորվում է բանավոր հարցման և գործնական աշխատանքների գնահատականների միջին թվաբանականը հաշվարկելու հիման վրա: Հիմնական կրթության հիմքով ընդունված սովորողները վերջին կուրսում <> առարկայից հանձնում են պետական ավարտական քննություններ՝ հանձնելով նորմատիվային պահանջներ:

4. ԿԱՊԿՈՒ ՍՈՎՈՐՈՂԻ ԳՆԱՅԱՏՈՒՄԸ ՖԻԶԿՈՒՆՏՈՒՐԱ ԱՌԱՐԿԱՅԻՑ

Հայաստանի դպրոցների ուսումնական ծրագրերը դժվար հաղթահարելի են աշակերտների համար Այս խնդիրն էլ ավելի սուր է դրված ԿԱՊԿՈՒ երեխաների համար հմինված լինի պետական չափորոշիչների և ծրագրերի վրա՞ Սովորողի ԱՌԴ-ով նախատեսված արդյունքների ամփոփումն իրականացվում է ԱՌԴ-ով, այն պետք է նկարագրական տեսքով, որը սովորողի առաջադիմության թերթիկի հետ միասին տրամադրվում է ծնողին: Սովորողի կրթական առաջընթացի ընթացիկ գնահատումը կատարվում է ԱՌԴ-ով սահմանված նպատակներին և խնդիրներին համապատասխան: Անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, վերանայվում են ԱՌԴ-ով սահմանված խնդիրները և գործողությունները, ինչպես նաև աշխատանքների ծավալները: ԿԳ նախարարի կողմից հաստատվող Սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման կարգում մասնավորապես նշվում է. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողների հաջորդ դասարան փոխադրումը կատարվում է անհատական ուսուցման պլանով իրականացված գնահատման հիման վրա (ԱՌԴ):» «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար գրավոր քննության ժամանակ կարող է տրվել լրացուցիչ 30-ից 40 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:»

Բացահայտված խնդիրներ երեխաների առաջադիմության գնահատման հետ կապված կան խնդիրներ: Մասնավորապես, ծնողները նշում են, որ կրթական ծրագրերը երեխայի 12 ընդունակություններին համապատասխան չեն, բայց առանձին դեպքերում էլ կա հակառակ երևույթը: Որոշ երեխաների հնարավորությունները, կարողությունները թերագնահատվում են, ինչի արդյունքում երեխայի մոտ հետընթաց է արձանագրվում:

Այսպիսով, ներառական կրթության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է առարկայական չափորոշիչները, ծրագրերը, ուսումնական նյութերը շատ ավելի բազմամակարդակ դարձնել, հասրտացնել ուսուցիչների, ուսուցչի օգնականների, աջակցության թիմերի մեթոդական գիտնոցը, որպեսզի երեխաների մոտ արձանագրվի առաջընթաց, աճ: Եթե չկա աճ, դրական փոփոխություն, չկա նաև կրթություն: Ներկա ծրագրերը, մոտեցումները դժվարություններ են ստեղծում բոլոր երեխաների համար, ինչից հատկապես տուժում է ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունը: Հատկապես դժգոհություններ կան մեծ դասարաններից, որոնցում ուսուցիչների համար դժվարություն են առաջանում ներառականությունն ապահովելու տեսանկյունից:

ԵՆՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սովորողների կողմից կրթական ծրագրի յուրացման գնահատումը կրթական գործընթացի կարևոր բաղադրիչ է: Կրթության հիմնական նպատակը ոչ միայն գիտելիքի և ավանդույթների փոխանցումն է, այլև մարդու կողմից աշխարհի իմաստավորման ունակության անընդատ կատարելագործումը: Գնահատումը, որպես կրթական գործընթացի գործիք, պետք է խթանի կատարելագործման այդ ձգտումը, գնահատելով անցյալը և ցանկալի ապագա կառուցելով:

Չարկ է առանձնացնել գնահատականի հետևյալ հիմնական գործառույթները՝ տեղեկացնող, հետադարձ կապի, սխալների ուղղման, մոտիվացնող, ինքնագնահատականի և հավակնությունների ձևավորման դաստիարակող, մոնիթորինգի, ուսուցման մեթոդների կատարելագործման, խմբային դինամիկայի և շերտավորման: Դրանք փոխկապակցված են և բոլորն էլ պարունակում են ապագործառույթային ռիսկեր, որոնք կարող են հանգեցնել կրթական դիմադրողականության:

Վերջինից խուսափելու համար գնահատականը կրթական համակարգում պետք է օգտագործվի որպես խրախուսանք և ոչ թե պատժամիջոց:

Աշակերտների հետ աշխատելիս ուսուցչի կարևորագույն խնդիրն է հայտնաբերել նրա ընդունակությունները, խրախուսել դրանց և ցուցաբերել անհատական մոտեցում դրանց պահպանման ու զարգացման համար: Նպատակահարմար է դպրոցականի մոտ ձևավորել ինքնուրույնությունը, աշխատունակությունը, ստեղծարարությունը, մտավոր զարգացման աճի ձգտումը:

- Եվ վերջապես պետք է ընդունենք, որ ուսուցանվող խաղերը, հետաքրքրաշարժ առաջադրանքները, սևեռում են երեխայի ուշադրությունը դեպի այդ խաղերն ու առաջադրանքները, հաղորդելու նրանց նոր գիտելիքներ, ստիպում են լարված մտածել, որն էլ նպաստում է դպրոցականների մոտ մտավոր և ֆիզիկական զարգացման խթանմանը:
- Դպրոցականների մտավոր և ֆիզիկական զարգացման համար ահրաժեշտ է աշակերտներին հաճախակի դնել այնպիսի խնդրահարույց իրավիճակներում, որոնց մեջ նրանցից պահանջվի հետազոտական մոտեցում: Չարկավոր է այնպես կազմակերպել պարապունքները, որ աշակերտների մեջ ծագեն ոչ միայն խնդրահարույց հարցեր, այլև նրանց մոտ առաջանա նրանց ինքնուրույնաբար լուծելու ձգտումը:

Значительная часть работы выполнена
в течение 5 часов, в том числе
вечером, в выходные дни (0,5 Spec.)

Важнейшими результатами работы являются
полученные данные, позволяющие
наблюдать, как изменяется температура
в процессе работы (0,5 Spec.)

Важнейшими результатами работы являются
полученные данные, позволяющие
наблюдать, как изменяется температура
в процессе работы (1 Spec.)

Важнейшими результатами работы являются
полученные данные, позволяющие
наблюдать, как изменяется температура
в процессе работы (1 Spec.)

Всего 3 Spec.

schiff der 5 gebirge am pferd mit 2000 5
polygraph & computer, wie 2000 (0, 5 8 punkte)
Geschichte der welt, die 1000 5 jahren 2000, 2000
und 2000 5 2000 2000 2000 2000
Erfahrung (0, 25 punkte)

Das Land der 1000 5 jahren 5 1000 2000
in 2000 5 2000 2000 2000 (1 punkte)
Erfahrung der 1000 5 2000 2000 2000
2000 2000 2000 (0, 25 punkte)

gesamt 2 punkte

ԴԱՍԻ ԿՈՆՍՊԵԿՏ

Դպրոց Ալաշկերտի Հր. Քոչարի անվան միջնակարգ դպրոց

Դասարան N 8 Ուսուցիչ՝ Ջանիբեկ Սաղաթեյան

Աշակերտների քանակը՝ 21 տղա՝ 11, աղջիկ՝ 10


Անցկացման վայրը՝ մարզահրապարակ

Դասի խնդիրները

1. Ամրապնդել բասկետբոլիստի կեցվածքավ տեղաշարժեր:
2. Ամրապնդել գնդակի վարում պաշտպանի դիմադրությամբ
3. Ամրապնդել գնդակի խլում և դուրս մղում շարժման ժամանակ:
4. Շարժողական ընդունակությունների մշակում(արագաշարժություն, ճարակություն):

Անհրաժեշտ գույքը՝ բասկետբոլի գնդակ, սուլիչ, վարկյանաչափ:

Դասի մասերը	Դասի բովանդակությունը	Չափավորում	Մեթոդական և կազմակերպչական ցուցումներ	
1	2	3	4	
Ներգրավիչ մաս՝ 18	շարք. հաշվարկ. գեկույց դասի խնդիրների հաղորդում	1	Ճակատային մեթոդ	
	քայլք			
	Դանդաղ վազք			
	վազք կից քայլերով			
	1.Բասկետբոլի կեցվածքով տեղաշարժեր, կից քայլերով՝ աջ և ձախ ուն առաջ, փոփոխելով, ոտքից ոտք ցատկելով, մեջքով առաջ կանգառ քայլով, վազք արագացումով անկյունագծով			Պահպանել կեցվածքը Հետևել հրահանգին
	Դանդաղ վազք	2 շրջ.		
	Քայլք՝ ընթացքում ը.գ.վ.,	5		
	I. Ե.դ. ձեռքերը առաջ	4X		
	1-4 ծալել մատները բռունցք և բացել			Լարելով մկանները
	5-8 ձեռքերը կողմ, նույնը:			
	II. Ե.դ. մատները հյուսած, կրծքի առաջ	4X		
	1-4 շրջաններ դաստակներով:			Լարելով մկանները
	III. Ե.դ. մատները հյուսած, կրծքի առաջ	4X		
	1 ձեռքերը ուղղել, ափերով առաջ			Արմունկները ուղիղ
	2 Ե.դ.			
	3 ձեռքերը վեր, ափերով վեր			
	4 Ե.դ.:			
	IV. Ե.դ. ձեռքերը կրծքին	4X		
	1-2 զսպանակելով արմունկները ետ			խորը
	3 ձեռքերը կողմ, ափերով վեր			
4 Ե.դ.:				
V. Ե.դ.- հ.կ.	4X			

	1 քայլ ձախով, ձեռքերը հասցնել ձախ ոտնաթաթին		Ծնկները չծախել
	2 քայլ աջով, ձեռքերը հասցնել աջ ոտնաթաթին		
	VI. Ե.դ. ձեռքերը գոտկատեղին,	4X	
	1 լայն քայլ ձախով, աջը ոտնաթաթին		Քայլը խորը
	2 Ե.դ.		
	3 լայն քայլ աջով, ձախը ոտնաթաթին		
	4 Ե.դ.:		
	Շարափոխում միասյունից երկսյան 		Աշակերտները կանգնեն իրարից 5 մ. հեռավորության վրա
	Գնդակի փոխանցում և ընդունում, երկու և մեկ ձեռքով կրծքից, մեկ ձեռքով ուսի վրայից, երկու ձեռքով գլխի վրայից՝ կատակից և միանգամից	5	Սկզբից դանդաղ, աստիճանաբար ավելացնել, ուշադրության դարձնել մատերի դիրքին
	Ընթացքում՝ տեսողության հսկողությամբ և առանց	3	Վարելով շրջանցում ենք զույգին, վերադառնում և փոխանցում, նույնը զույգը
Հիմնական մաս՝ 22	2. Գնդակի վարում պաշտպանի դիմադրությամբ	6	Աշակերտներին շարել դիմային գծի վրա զույգերով
	-գնդակի վարում պաշտպանի դիմադրությամբ 10 մ. տարածության վրա	2X	Մրցակցական մեթոդ: Վարման ժամանակ գնդակը փակել իրանով, պաշտպանական գործողությունները կից քայլերով, ձեռքերի շարժումներով
	3. Գնդակի խլում և դուրս մղում շարժման ժամանակ	6	
	-գնդակի խլում և դուրս մղում շարժման ժամանակ 10 մ. տարածության վրա		Մրցակցական մեթոդ: Գնդակով ասկերտը կատարում է վարում, մյուսը աշխատում է խլել -ուրս մղել գնդակը, գնդակը խլելուց տեղերով փոխվում են
	4. Շարժողական ընդունակությունների մշակում (ճարպկություն)		
-Էստաֆետա գնդակի վարումով, կանգառով և նետումով	10	Մրցակցական մեթոդ:	

Եզրափակիչ մաս՝ 5

Շարք		
Դանդաղ վազք	2շրջ.	Թուլացնել ձեռքերի մկանները:
Քայլք	1շրջ.	Կարգավորել շնչառությունը
Շարք, դասի ամփոփում, տնային առաջադրանքների հաղորդում		

ԴԱՍԻ ԿՈՆՍՊԵԿՏ

Դպրոց Ալաշկերտի Հր. Քոչարի անվան միջնակարգ դպրոց

Դասարան N 10 Ուսուցիչ՝ Ջանիբեկ Սաղաթեյան

Աշակերտների քանակը՝ 18 տղա՝ 8, աղջիկ՝ 10

Անցկացման վայրը՝ մարզահրապարակ



Դասի խնդիրները


1. Ուսուցանել բարձրացատկ քայլանցում եղանակով:
2. Ուսուցանել փոխանցավազք 4x60մ:
3. Շարժողական ընդունակությունների մշակում(արագաշարժություն, ցատկունակություն):

Անհրաժեշտ գույքը՝ սուլիչ, վարկյանաչափ, կանգնակներ բարձրացատկի համար, ներքնակներ, երկար պարան, փոխանցավազքի փայտիկներ:

Դասի մասերը	Դասի բովանդակությունը	Չափավորում	Մեթոդական և կազմակերպչական ցուցումներ
1	2	3	4
Ներգրավիչ մաս՝ 12	շարք. հաշվարկ. զեկույց, դասի խնդիրների հաղորդում	1	Ճակատային մեթոդ
	Շարային վարժություններ	2	Հետևել կեցվածքին
	քայլք	0.5 շրջ.	
	Դանդաղ վազք	3 շրջ.	
	Վազք տարբեր առաջադրանքներով՝ կից քայլերով, մեջքով առաջ, ծնկները վեր բարձրացնելով, սրունքները հետ գցելով, լայն քայլերով:	4 շրջ.	
	Արագացումներ անկյունագծով		Մաքսիմալ արագությամբ
	Դանդաղ վազք	2 շրջ.	Կարգավորել շնչառությունը
	քայլք	2 շրջ.	
	Շարափոխում միասյունից քառասյան	1 շրջ.	
	Ը.Ձ.Վ. զույգերով և փայտիկով		Որոշել առաջին և երկրորդ համարներին
	I. Ե.դ. -կանգնած դեմքով միմյանց՝ մեկ քայլ հեռավորությամբ, փայտը բռնած առաջ		
	1-2 ծալել ձեռքերը, կրծքերով մոտենալ իրար		Մկանները լարելով
3-4 -Ե.դ.:			
II. Ե.դ. կանգ ուղքերը զատած դեմքով միմյանց՝ երկու քայլ հեռավորությամբ, փայտը			

	բռնած առաջ:	
	1-2 –թեքում առաջ արտակորված, փայտը վեր	խորը
	3-4 ե.դ.	
	III. Ե.դ. կանգ ոտքերը զատած, դեմքով միմյանց երեք քայլ հեռավորությամբ, փայտը ցած և ձեռքերում	
	1-2 – թեքում առաջ, փայտը փոխանցել II	Ծնկները չծալել
	3-4 - ե.դ.:	
	3 ձեռքերը վեր, ափերով վեր	
	IV. Ե.դ. կանգնած դեմքով միմյանց՝ մեկ քայլ հեռավորությամբ, փայտը բռնած առաջ:	
	1-2 –կքանստել աջին, ձախը սահեցնել ետ	Ուտնաթաթը ձիգ
	3 -4 ե.դ.:	
	V. Ե.դ.- կանգնած դեմքով միմյանց՝ մեկ և կես քայլ հեռավորությամբ, փայտը բռնած առաջ	
